ներով և ամրացեալ։ Ունի չորս փոքր եկեղեցիներ, ուր պաշտամունքները կը կատարէին 100 միանձունք, որոնք միաբնոյն ատեն վերակացու և ուսուցիչ էին այն դպրոցին մէջ, ուր կարդալ և գրել կը սորվեցընէին։ և Աստուածաշունչ գրոց ծանօթութիւնը կուտային արքայական պաշտօնատարութեան պատրաստուող տղոց։

Այս քաղաքին մէջ կրպակ չկար, ամէն օր վաճառականները կը ժողվուէին ընդարձակ հրապարակին մէջ և հոն՝ փսիաթներու վրայ կը տարածէին իրենց վաճառքները։

Այս քաղաքն ալ ունէր երկու մաս, վերին և ստորին, և քրիստոնեայք ու մահմետականք զատ մասեր կը բնակէին, զի արգիլուած էր մահմետականներուն խառն բնակիլ քրիստոնէից հետ։ Քաղաքէն դուրս կային աւաններ կամ արուարձաններ, որոնցմէ մէկուն մէջ՝ ընդարձակ կրկէս մը և անոր մօտ արքունի ապարանք մը, ուր կը բնակէր ինքնակալը, երբ զինուորները քննելու ելլէր։

Հ. Ստեփաննոս Ագոնցի համաձայն (Աիրիկէ, էջ 551), մեծ լիճ մը կը գտնուէր Տումպիա նահանգին մէջ և կը կոչուէր Զանա կամ Ծանա և կամ Ծով Տեմպիա՝ իր ընդարձակութեանը համար։

Շէջապատը 300 մղոն էր, իսկ լայնութիւնը 120։ Ունէր բազում կղզիներ, որոնց մեծ մասին մէջ մենաստաններ կամ միանձանց անապատներ կային։

Ագոնց ոչինչ կ'ըսէ Նեղոսի ակերու մասին, միայն կը հաստատէ, թէ Նեղոսի զանազան ճիւղերը և վտակներ կ'ոռոգեն Տէմպիա նահանգը և զայն արգաւանդ կ'ընծայեն (Ագոնց, նոյն, էջ 551), մինչ Յովհաննէս Թիւթիւնճի Զանա լիճը կը ներկայացնէ